

Երեւոյն



12

(183)
Դեկտեմբեր, 2021

Մարինա Յվետսկան ռուս գրականության ամենաբարդ ու ինքնատիպ վարպետներից է, քանի որ նրա ստեղծագործության հիմնարար ուղղություններից մեկը դարձավ ձգտումը դեպի բանահյուսական պոետիկան և պատկերային համակարգի ստեղծումը, որի ակունքները ժողովրդական ավանդույթներն են և ժողովրդական խոսքը:

Մեր սեղանին է Յվետսկայի ընտիր քնարերգության հայերեն թարգմանված, ուշադրության արժանի առաջին ժողովածուն՝ տաղանդավոր թարգմանչուհի և ինքնատիպ բանաստեղծուհի Ռուզան Յովասափյանի թարգմանությամբ: Գրքում ընդգրկված է 80 բանաստեղծություն, որոնք գրվել են տարբեր տարիների՝ ներկայացնելով նրա ստեղծագործության տարբեր ժամանակաշրջանները:

Գիրքը որոշակիորեն հասցեագրված է երկնազու ընթերցողներին, քանի որ թարգմանություններին զուգահեռ ներկայացված են նաև բնագրերը: Ռուզան Յովասափյանը փորձել է հաղթահարել լեզվական և մշակութային արգելքները և հայերենով համարժեք ներկայացնել ռուս մեծ բանաստեղծուհու ստեղծագործությունը:

Թադևոս Թադևոսյան
Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Ռեզյումե

Քանի՞-քանիսն են այն անդունդն ընկել՝
Հեռվում լայն բացված...
Երկրի երեսից ես եմ մի օր էլ
Կորչելու անդարձ:

Կսառչի ամենն, ինչ լույս էր
տալիս,
Երգում էր, թռչում.
Ե՛վ փայլն աչքերիս, ոսկին
վարսերիս,
Ե՛վ ձայնս հնչում:

Ե՛վ կլինի կյանք՝ հացիվ
կենսական,
Օրվա հետ՝ անցնող,
Կլինի ամենն, ու չեմ հասկանա-
եղե՛լ եմ արդյոք:

Ե՛վ փոփոխական, և՛ անչար
այնպես,
Ինչպես մի մանուկ՝
Այն ժամը սիրող, երբ օջախի մեջ
Փայտն է մոխրանում:

Թավուտում՝ ձիեր, և թավուրթալ

կա,
Ե՛վ զանգ կա գյուղում,-
Ես այնքան ես եմ, խենթ ու
խկական՝
Հայրենի հյուղում:

Բոլորիդ, որ ինձ՝ չափ չհմացողիս
Օտար ու իմն եք,
Ես դիմում եմ, որ հավատաք դուք
իմն,
Ե՛վ խնդրում՝ սիրեք:

Այո և ոչի՝ ճշմարտի համար՝
Գիշեր ու ցերեկ,
Նրա համար, որ, դեռ քսանամյա,
Տխուր եմ ու հեզ:

Նրա համար, որ անհրաժեշտա-
բար
Ներքե վերստին
Իմ անգուստի քնքշության համար
Ե՛վ հպարտ տեսքի:

Դեպքերի համար՝ բուռն և համառ,
Խաղի, ճշմարտի...
-Լսե՛ք, սիրեք ինձ և նրա՝ համար,
Որ մեռնեմ պիտի:

8 դեկտեմբերի 1913

Քեզ՝ հարյուր տարի անց

Քեզ, որ կծնվես հարյուր տարի
անց,
Երբ որ շունչ առնեմ խորքերից
մթին-
Իմ տկար ձեռքով, մահապարտը
հանց,
Կգրեմ թղթին.-

Մի՛ փնտրիր դու ինձ: Ուրի՞չ է
մոռան:
Անգամ ծերերն ինձ չեն մտաբե-
րում:-
Բերանն անհաս է: Ես գետով Լե-
թա
Ձեռքերս եմ մեկնում:

Ես քո աչքերն եմ տեսնում՝ զույգ
խարույկ-
Շիրմում, դժոխքում ինձ հրին
մատնած,
Տեսնում նրան, որ ձեռքը չի շար-
ժում
Դար առաջ մեռած:

Ձեռքիս-երգերս մի բուռ փոշու
պես-
Տեսնում եմ՝ ինչպես քամուն ու
ցրտին
Դու տունն ես փնտրում, ուր ծնվել
եմ ես-
Կամ մեռնեմ պիտի:

Երբ նայում ես դու ողջ, ուրախ
կանանց,
Հպարտանում եմ, որսում ամեն
խոսք.-
Դու՛ք, ինքնակոչներ, բոլորդ՝ մե-
ռած,

Ողջը նա՛ է սուկ:

Ես կամավոր եմ ծառայել նրան,
Գաղտնիք ու զարդի պահուստն
իմացել:
Դիակապուտներ, մատանիներն
այդ
Դու՛ք եք գողացել:

Օ, իմ կորսված հարյուր մատա-
նի,
Առաջին անգամ զգում եմ այն-
պես,
Նվեր եմ տվել՝ ում որ պատահի-
Չե՛մ սպասել քեզ:

Տխուր եմ նաև, որ այս ուշ ժամին-
Մարող արևի հետքերով հանգած-
Ես քեզ հանդիման քայլեցի լռի-
Հարյուր տարի անց:

Գրագ կգամ, որ անեծք կթափես
Իմ ընկերների շիրիմներին պաղ.-
Գովում էիք, իսկ վարդագույն
զգեստ
Նվիրող չեղավ:

Ո՞վ չէր շահասեր: Շահասեր եմ
ես.
Թե չես սպանում, ի՞նչ թաքուն
պահեմ,
Նամակ եմ խնդրել բոլորից, որ
հենց
Մթնի՛ համբուրեմ:

Ասե՛՛մ – և կասե՛՛մ: Ի՞նչ չգոյութ-
յուն.
Հյուրերի մեջ դու՛ կրթոտն ամե-
նա,
Ե՛վ կմերժես քո սերերը հանուն
Ոսկրերի – նրա:

Սե՛՛մ – և կասե՛՛մ: Ի՞նչ չգոյութ-
յուն.
Հյուրերի մեջ դու՛ կրթոտն ամե-
նա,
Ե՛վ կմերժես քո սերերը հանուն
Ոսկրերի – նրա:

Օգոստոս 1919

Քրիստոս, Աստված: Հրա՛ջք եմ
տեսնում
Հիմա՛, այս պահին, օրվա սկզբին:
Օ, մահին տուր ինձ, քանի դեռ
հնչում
Գիրք է ինձ համար ամբողջ կյան-
քը իմ:

Դու իմաստուն ես: Դու չես ասի
խիստ.-
«Համբերիր, ժամկետն ավարտ-
ված չէ դեռ»:
Դու ինքդ այնքան շատ ես տվել
իմն,
Մեկից եմ տեսնում ամեն ճամփա,
Տե՛ր:

Ամե՛՛նն եմ ուզում. հոգով զնչուի՛
Երգի տակ զնալ ավագակության,
Ե՛վ կռվել որպես ամազոնուհի,
Բոլորի տեղը նվազի տակ լալ.

Հեռու աստղերով գուշակել
երկար,
Մթնում ուղեկցել երեխաներին,

Որ լեզունդ դառնա օրը երեկվա,
Որ ամեն օրը – խենթություն լինի:

Սիրում եմ թե՛ խաչ, մետա՛քս,
սաղավա՛րտ,
Վայրկյանի հետք է իմ հոգին
արթուն...
Ինձ մանկություն ես տվել՝ հանց
հեքիաթ,
Ե՛վ մա՛հ տուր Դու ինձ – իմ տասն-
յոթուն:

26 սեպտեմբեր 1909

Նրանք, փութորեն գրված, թռչում
են –
Տաք՝ հաճույքներից և ցավից դա-
ռը:
Սիրո և սիրո միջև խաչվում են
Իմ ակնթարթը, տարին և դարը:

Ամազոնուհու նիզակն է փայլում –
Աշխարհում մի տեղ ձայն է աղե-
տի:
– Իսկ ես գրիչս ետ չեմ պահելու:
Երկու վարդ ծծեց արյունն իմ
սրտի:

Հունվար 1916

Զմռանը

Պատերից այն կողմ՝ տրտունջ ու
բողոք.
Չանգերն են երգում անդադար...
Մեզ բաժանում է մի քանի փողոց,
Մի քանի բա՛ռ:

Քաղաքն է քնում մեզ ու մշուշում.
Երևաց մանգաղն արծաթե,
Ե՛վ քո օձիքն է աստղերով
նախշում
Չյունը թեթև:

Վիրավորո՞ւմ եմ կանչերն
անցյալի,
Վերքերը երկա՞ր են ցավում:
Նոր-վառ հայացքն է բարկացնում
լռին
Ու հմայում:

(Լո՞ւրթ, թե՞ դարչնագույն) սրտի
համար այն
Վե՛ր է էջերից իմաստուն,
Ե՛վ թարթիչների նետերն է եղյամն
Սպիտակեցնում...

Լռել է ահա պատերից այն կողմ
Չանգերի տրտունջն անկար:
Մեզ բաժանում է մի քանի փողոց,
Մի քանի բա՛ռ:

Լուսինն է թեքվում հոգիների մեջ
Բանաստեղծների և գրքի:
Թափվում է ծյունը՝ խավավոր ու
պերճ
Քո օձիքին:

[1909-1910]



Սխալմունք

Երբ փաթիլը ձյունի, որը թեթև
թռչում –
Ինչպես ընկնող աստղիկ՝ հան-
դարտ ընկնում է վար,
Ձեռքիդ մեջ ես առնում, նա
արցունքով հալչում
Ե՛վ թեթևությունն իր ետ չես բերի
բնավ:

Ե՛վ երբ հմայվելով մեղուգայի
փայլով՝
Մենք դիպչում ենք նրան քմայքով
ծեռների,
Շղթաներում բանտված՝ որպես
կալանավոր,
Գունատվում է հանկարծ, թվում է՝
կմեռնի:

Երբ մենք ցանկանում ենք
ճախրում թիթեռների
Երկրային բան տեսնել և ոչ թե
երազանք –
Նրանց զգեստն ո՞ւր է: Ավա՛ղ, մեր
մատներին
Լուսայգից գունատված լոկ
փոշին է նրանց:

Թող ձյան փաթիլները թռչեն թի-
թեռ-թիթեռ,
Ավազին մի՛ գոհիր մեղուգային
այն խեղճ.
Երազանքը ձեռքով չի՛ կարելի
բռնել,
Չի՛ կարելի նրան պահել ձեռքերի
մեջ:

Չի կարելի նրան, ինչ թախտ էր
երեր,
Ասել, թե՛ կի՛րք եղիր, շիկնիր հրա-
շաղախ.
Քո սերը այնպիսի՛ սխալմունք է
եղել.-
Բայց մենք առանց սիրո կործան-
վում ենք: Կախա՛րդ:

[1909-1910]

Թարգմանեց
Ռուզան ՅՈՎԱՍԱՓՅԱՆԸ



ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԷԼԻ ՄԻ ԵՐԳ ՔՈ ՄԱՍԻՆ՝ ՍԵՐ

Հորինի՛ր ինձ, մի վերջին անգամ հորինի՛ր ինձ, այս քարափի ծերային, իբրև մասրենու բոց նոյեմբերյան ցրտում: Ես գիտեմ, շուտով ծյուն է թափվելու վիրակապի նման և շոյանքի: Ես արդեն վախենում եմ ասել՝ կարոտել եմ, ես արդեն վախենում եմ նայել իմ ձեռքերին, վիրակապի նման և շոյանքի

հորինի՛ր ինձ, մի վերջին անգամ հորինի՛ր ինձ, քո մատներից այն կողմ՝ դրսում. ծխախոտը սեղմած շուրթերիս մեջ, աչքերիս մեջ՝ պատկերը փլվող հորիզոնի, ուսերիս՝ հոգնությունը տարադարձիկ օրվա: Երբ դու սիրում ես, քո ափերը տաք են, և մազերդ բուրում են կախարդանքի մշուշ: Հորինի՛ր ինձ՝ կախարդված մնամ. հորինի՛ր ինձ՝ չմոռանա: Ես արդեն վախենում եմ նայել իմ ոտքերին, երբ դեռ ծյուն է չկա, ոչ էլ՝ ոտնահետքեր, բայց կա պատմությունը սիրապատառ ցավի, որը կրկնում է. «ուրեմն ինչպես միշտ աղջիկ էր, ուրեմն ինչպես միշտ տղա էր, և սեր էր ինչպես միշտ տարուբերվում օդում»: Եվ տղան ինչ-որ բաներ էր կորցրել, և աղջիկը ինչ-որ բաներ էր հայտնաբերել իր ուսերի վրա և լռում էր, և լռում էր, և լռում էր... Եվ տղան ասում էր՝ կանգ առ, նայի՛ր մեջքովորդ, և աղջիկն ասում էր՝ կանգ առ, նայի՛ր շուրջբոլորդ,

և բոլոր խաչմերուկներում լույսը կանաչ էր, և կանգ առնելու ժամանակ չկար, և հարկավոր էր՝ առաջ, էլի առաջ, և ամեն ինչ մնում էր՝ հետո, էլի հետո... Հորինի՛ր ինձ ճաքճքած շուրթերին հիշողության, պատահական մաշկի տակ երգի, ամենուր... Այս ցավի դեմ մենակ, այս երգի դեմ մենակ, հորինի՛ր ինձ - չլինեն այսքան մենակ: Մենակ հորինի՛ր: Հորինի՛ր ինձ քո շնչառության նախածալքերում, իբրև ծփանքի պահ դաշնավորված Կերպի, իբրև զոհատրման անվախճանյալ հիացք և տեղի շնչահատյալ, և ճիչ մենաբաղձիկ, և սեր անտարուբեր, - հորինի՛ր ինձ: Մեր դժվար գոյության քարածերպերին միշտ ճիչ կա մասրենու, նույնքան ճարահատյալ՝ հորինի՛ր ինձ: Անգամ ծառը, նայի՛ր. ցրտահար բողբոջների տարաբախտիկ վախով կեղևաճաք է տալիս՝ հորինի՛ր ինձ

ծաղկեմ: Երեկ մեկի քունքին արնապուտ կար փոքրիկ, և աչքերը բաց էին՝ ոչ ոք չհորինեց գոյությունը նրա - ապրե՛ր: Հորինի՛ր ինձ, մի վերջին անգամ հորինի՛ր ինձ - քո կողքին, քո մեջ, շուրջբոլորը քո: Հիշո՞ւմ ես, երգ կար. «Մեր միջև չի եղել ոչինչ, ինչ եղել է, եղել է մեր մեջ...»: Հորինի՛ր ինձ՝ հիշեմ և մոռանամ՝ հետո ինչ կար հորինելու... Ես գիտեմ, շուտով ծյուն է թափվելու (ինքդ ասա, արդեն ինչի նման): Ես վաղուց եմ վախենում նայել իմ ոտքերին, երբ դեռ ծյուն է չկա, ոչ էլ ոտնահետք՝ դեպի քեզ շտապող: Ոչ էլ... հորինի՛ր ինձ: Ահա առավոտը, ահա երգը այն նույն, իսկ մնացածը... հորինած է... ...հորինի՛ր ինձ:

*** Դու այսօր էլ չեկար, աղջիկ, դու այսօր էլ չեկար, Դու այսօր էլ չառար մութը թևերիդ մեջ, Քո քայլերի նման ժամացույցն է կարծում սպասումը երկար, Դու այսօր էլ չեկար, աղջիկ, դու այսօր էլ չեկար: Հեռուներում ինչ-որ մեկը ծխախոտ էր ծմռում խեղճ, Օտարվեցին մայրերին իրար, վնասատուվ հեռացան, Սկիզբ չեղած, աստված գիտի, ինչպես եղավ արդեն վերջ, Դու այսօր էլ չեկար, աղջիկ, դու այսօր էլ չեկար: Գիցիս հիմա ինձ կհուշի լուսահոգի մի անցյալ, քո կենացի վրա մեկը կուզի հեքիաթ պատմել, Բայց հեքիաթը ինչ եմ անում, երբ ցավն ինքն է հանգուցյալ, Դու այսօր էլ չեկար, աղջիկ, դու այսօր էլ չեկար: Հիմա իմ դեմ կորբանա կիսաժպտուն մի պատկեր, Քերծվող թախիծ թաքուն դողով կթարտա այս տողում, Բայց չեմ կարող ոտնածայնիդ խարդավազքը ես ասել, Դու այսօր էլ չեկար, աղջիկ, դու այսօր էլ չեկար: Դու այսօր էլ չեկար, աղջիկ, դու այսօր էլ չեկար, Եվ այսօր էլ չառար մութը թևերիդ մեջ, Քո քայլերի նման ուրիշ սեր է կարծում սպասումը երկար, Դու այսօր էլ չեկար, աղջիկ, դու այսօր էլ չեկար:



ՏՄՆՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ես սրան եմ ծաղիկ տալիս, և նրան - դեռ չգիտեմ, և այս պատմ եմ գարդարում և այն պատը, և այս դռանն եմ, և այն: Դեռ գործ անել չգիտեմ, դեռ սահուն վալս պարել չգիտեմ, դեռ համեմունքները կարգին չեն ջրկում, ականջողեր եմ կախում մարգարիտ, բայց եղունգներս են սուր, ուղիղ գիծ քաշել և ճկուն ու ամփոփ շրջագիծ - չգիտեմ, խառնում եմ իրերը, դեռ արդարագործ, արդարադատ չեմ: Սրբում եմ կոշիկներիս փոշին, հատակն անավել եմ թողնում, մայրս ինքն էլ քիչ գիտեր, քույրս ինքն էլ կարիքի մեջ էր, մի քիչ սովորում եմ օտար լեզուն, ճանապարհին մայրենիս եմ մո-

ռանում, ես դեռ սխալ-մխալ եմ դասավորում, ես դեռ կարգին տանտիկին չեմ, ես դեռ կարգին հագնվել, կերակրվել, միստուկաց, բարև-աստու բարին, ազգուտակ, պատմություն, աշխարհագրություն - չգիտեմ, դաշնամուր եմ նվագում երեկոներին - որդուս հետ խոսքի գալ դեռ չգիտեմ, դեռ փողոցն անցնել, հյուր գնալ, թատրոն նայել, աչքերին նայել ու ասել, քննարկել, ելնել ու կանգնել, բարձրանալ չգիտեմ, - հայրս ինքն էլ անօգնական էր ամեն հարցում, եղբայրս էլ հավետ գառ մնաց, ընկերս արմունկով անշնորհք հրում էր զուգահեռ ընթացքիս ժամանակ, և այն կինն անճոռնի աղմուկով ինչ-որ խփշտում էր համերգի ժամանակ, - նրանք ինձ ինչ տվեցին - չգիտեմ: Ես ծարավի եմ, խակ ու անդուռ, շարժումներս բացազատված չեն, բնատուր խելքս չծաղկեց, զգացմունքներս չեն բուրում, շնորհքներս խեղճ են ու քնած, կեցվածքս ու կյանքս տարերային ու խճողված: Պռատությունը ինձնից չի պոկվում, թերարժեքության պատանքի մեջ եմ, և վտանգված եմ - ինքս ինձ չսիրելու դառնաղի թույնով: Սնունդ եմ ընդունում, կերակրվում - խառն ու կոպիտ, վերջում որովայնս է մղկտում,

ցավից զալարվում, մարմինս է վատթար եղծվում - անտեր, - և հարևանս էր տաճարից հեռու, և բարեկամս էր անարվեստ կենցաղ, - այդպես էլ մնում եմ անմշակ, անտաշ ու աղավաղված, անկարգին և չկարգված և անդաստիարակ՝ իմ ծնող, իմ ընկեր, հարևան և նաև երկիր, - ձեր կողմից - մեկընդմիշտ խափանված, - և ձեզանից - կարծես թե դեռ ոչինչ - չսովորած: *** Եվ աչքերս թաց են, և սիրտս՝ կոտրված ափսե, և ձեռքերս՝ դողով բռնված, էլ ինչպես երկարեմ դեպի արևածաղիկը, և ոտքերս՝ դողով բռնված, էլ ինչպես դուրս գամ ճանապարհ: Որովհետև միստր ճակատագիրը ձաղկել է մեջքս մերկ - որպես մի ձիու մեջք մերկ - ու դեռ պտտվում է օդում խնդմնդալով - դաժան ճիպոտն իր քամահրանքի - սև, օձածև: Էլ ինչպես դուրս գամ ճանապարհ ոտքերի տակից, ծեծված ու մեռած ու ամոթահար: Բայց ես ահա թաքուն նայում եմ ոչ թե ետ - այլ՝ առաջ, նրա ինձ թվում է՝ կանգնած ես դու - կարմիր բլուզով ու կանչում ես - զգացումի պես կարմիր: Եվ ես ջրկում եմ զգեստներիս

մեջ ամենազեղեցիկը ու հասկանում եմ, որ ճակատագրից անդին էլի օր կա ու - ճանապարհ, գիր ու պարտեզ, - ինչպես՝ փակ պարսպից այն կողմ ծաղկում է պարտեզ: Եվ ես, մերկ ու ցավոտ, պարզում եմ մեջքս - որ համբուրես կապտուկներս ցավս - ճակատագրից այն կողմ, ճակատագրից հեռու, անդին ու դուրս: *** Ծիտոն-կնոջ կրծքով ճերմակ ու բացփռված սալ քարին-այլեսս անշունչ, - հիմա դու տես, թե քանի լաց պիտի լամ ես այսօր-քանի ողբ ու կական,- մեկ, որ լռեց ծվլոցդ, ես մի դրախտ լռեց,- մեկ, որ- լեշդ անվա- մեջտեղում խայտառակ ընկած- մի մեռել ես անպատիվ, ես վերցնող չկա, ես չեմ էլ թքում քո վրա, երբ անցնում-գնում եմ դրանք փայլվելով- դեպի կենտրոն, հրապարակ, պառնաս, աթոռանիստ-վերել- դեպի հավերժը զագաթի,- ես մեկ էլ, ծիտոն- ամենակարելոր լացը՝ որ- ես նույնպես, ես- որ դեռ բարի եմ, խիղճ ու տեսքով մարդու- աչքս նրանց վերել տնկած աչքին տնկելով, ես նույնպես չթքեցի վրադ ես նույնպես անցա-զնացի նրանց հետ՝ դեպի վերել, դեպի հավերժը

զագաթի: Ամենաթունդ լացը այսօրվա, ծիտոն-այր, իմ վրա է, որ ես ողորմելի մի հետեւող եմ, մի բարի, մի լղրճուկ բարի-բայց մի քստմնելի օրինակ վերցնող, մի անսկզբունք շարժվող անողնաշարավորների դասից, մի անլեզու, անբերան անասուն հոտի անդամ, կուլեցիցիոների մանրադիտակի տակ հագիվ շարժվող - մի միկրոթ մի քեզանից առավել-անշունչ, սատկած անվա լեշ, - որ իբր թե - անոթու, որ իբր թե - ինչպես կարող եմ հասարակությանը զանգվածային չհետեւել - երբ հասարակությունը, անզգա զանգվածը - այլևս - այս կողմ է շարժվում, ոչ թե այն կողմ, ծիտոն, իբր թե - թեկուզ թքած իմ անհատական- մարդկային խղճի ու սրտի վրա, որ ներքուստ քո կողմն էր շարժվում, ծիտոն, քո կողմը... *** Զյան տակ - Ծառի տակ - Անգույն մի բան կա, Անձև, - Հետո, երբ ես ու դու գրկում ենք իրար Ու բարձրանում - նստում ենք Ծառի ամենավերին ճյուղին, Որ բոլորն են տեսնում, - Ասում են՝ դա բողբոջն է, Ասում են՝ ծառը բողբոջն է...

ՃԵՐՄԱԿ ՀՈՂ, ԿԱՐՄԻՐ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

88-ին շատ էր ծանրացել մեր կյանքի նմարը: Հետևանքը եղավ այն հսկայական մարդկային կորուստը, այն հզոր ֆիզիկական ու հոգևոր փլուզումը, որ կրեց մեր սերունդը: Մեզ համար անակնկալ, բայց հայ ժողովրդի ճանապարհին հայտնված հերթական պատուհասը...

88-ը երկթևանի դաշույնի պես խրվեց հատկապես հայ մշակույթի և արվեստի թիկունքին: Խոնարհվեց հայոց մշակույթի մայրաքաղաք Գյումրին, և նրա գրականության յուրօրինակ ծառից ճյուղեր գատվեցին:

ՊԱՏՎԱԿԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ
Շենքով-շնորհքով, ճշմարտությունը պաշտամունք դարձրած, երբեք խիղճը ճանապարհին չնոռացող, մեծի հետ՝ մեծ, փոքրի հետ՝ փոքր: Հոգու դռները կրնկի վրա բաց, և այդ դռներից անընդհատ ճառագող բարություն... Էլի՜ բարություն...

ՎԱՐԴԳԵՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ
Բացարձակ գեղեցիկ հոգու տեր մարդ: Արձակագիր: Մտերիմների, ծանոթ-անծանոթների համար հավասարապես սիրելի: Շրխկան հումորով, մաքուր հոգով ու կենսակերպով մի անձնավորություն:

ՏԱՆՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանաստեղծությունը երկնքում չէ, որ պիտի ապրի: Բանաստեղծությունն այստեղ է՝ քեզ հետ: Բաց տանդ դուռը, դուրս արի և մեկ բանաստեղծությունից կտեղափոխվես մյուսը: Կյանքը քնարերգության մի լիակատար ժողովածու է: Ընդհատված կյանքը... Որքա՞ն կիսատ մնացած չափածո հատորներ կան հայ գրականության մեջ...

ԱՐԱՐԱՏ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
Գեղարվեստական ճշմարտության զգայաչափ: Կարող էր բորբոքվել վատ բանաստեղծություն լսելուց: Գնահատելիս խիստ էր, բայց երա-

նի նրան, ով արժանանում էր Արարատի բարձր գնահատականին: Կյանքում՝ ազնիվ, բանաստեղծության մեջ՝ ազնվական: Չզայրուցանող երբեմն այնքան հախուռն էին, որ ժամանակի 33-ամյա գտիչով անցնելուց հետո անգամ չէն համոզարտվում. նույն հորձանքն է, նույն ալեբախումը...

ՀԱՅՎԱՆԻ ՏՈՆՈՅԱՆ՝
թրթռուն բանաստեղծություններով: Բանաստեղծությունը կյանքին, կյանքը բանաստեղծությանը կապող սիրով: Իսկ սերը՝ տող առ տող, պատկեր առ պատկեր հորդում է գոլտրիկ բանաստեղծություններից: Մնում է Սիրո այդ անձրևի տակ զբոսնել՝ հասնելով բանաստեղծությունը կյանքին կապող կամրջին ու այնտեղից ցած՝ նայելով տարակուսած օրորել գլուխը...

ԱՆՂՐԱՆԻԿ
ՎԱՐԱՊԵՏՅԱՆ



Երկրաշարժի զոհերի հիշատակին Գործ՝ Զավեն Կոչտոյանի

ԽԼՎԼԻԿԻ ՀԱՎԱՏԱԼԻՔԸ ԵՎ ԱՐՏԱԽԼԵՍԻ ՍՈՎՈՐՈՒՅԹԸ
ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հասնիկ ԳՍԼՍՅԱՆ

Հայ ժողովրդական գրույցներում և հավատալիքներում համեմատաբար քիչ հանդիպող ստորին առասպելաբանական կերպարներից է խլվիկը, որը քննվում է աշուն-ձմեռ անցման և բերքահավաքի համատեքստում: Խլվիկի որպես արտերի ոգու հավատալիքին մասամբ զուգահեռվում են արտախլեսի (արտախլիս) հավատալիքն ու համանուն ծեսը:

Խլվիկը հայ ստորին առասպելաբանության մեջ առանձնանում է իր երկակի դրսևորմամբ՝ պատմական Հայաստանի Պարսկահայք (Խոյ, Սալմաստ) նահանգում որպես չար սատանա, իսկ Վան-Վասպուրականում՝ արտերի բարի ոգի:

Պարսկահայքում խլվիկը բողոտ գլխարկով սատանա էր պատկերացվում, որը բարեկամի կերպարանքով զախիս, խաբում էր մարդկանց և իր հետ տանելով ժայռից ցած էր գլորում: Րաֆֆու վկայությամբ՝ պարսկահայքը «Նավասարդի վերջին գիշերում ամենակին չեն քնում և ոչ էլ իրենց փոքրիկ երեխաներին թույլ են տալիս, որ քնեն, կամ միայնակ դուրս գան տնից մութի մեջ: Որովհետև խլվիկը, որ նույն գիշեր ման էր գալիս երգիկների վրա, գողանալու էր երեխաները՝ վրեժխնդիր լինելով այն հին թշնամությանը, որով մի ժամանակ մարդիկ /Հովասաբենք/ չարաչար էին նրան երկար ծառայեցնելով իրանց տան մեջ: Մայրերը միշտ վախեցնում էին իրանց երեխաներին խլվիկի անունով, որ չարություն չգործեն» (Րաֆֆի, Սալբի, ազգային վիպասանություն պարսկահայոց կյանքից, «Երկերի ժողովածու», հ. 1, Երևան, 1962, էջ 73-74):

Վան-Վասպուրականի և Հարք-Բուլանջի ժողովրդական պատկերացումներում խլվիկը (Բուլանջիում խլվիկը խիպիկի էր կոչվում) դաշտերի մեջ է բնակվում և արտերի արդյունաբերող ոգին է համարվում: Աշնանը արտերը հնձելու ժամանակ, խիպիկը մտնում էր բարդված խրճերի տակ և շատացնում, առատացնում դրանք:

Բորչալուի հայերի պատկերացմամբ՝ ցորենի արտերի բերքը փչացնողը որոմն է (տարբեր բարբառներում մրիկ, մրեկ, մրուկ կոչվող երևույթը), որը ժողովրդական պատկերացումներում որպես դև է ընկալվում: Այն «կերպարանափոխվում է ցորենից՝ մարդկանց մեղքերի պատճառով, ուստի և ոչ թե մաքրում են ցորենի սերմը որոմի սերմից, այլ աշխատում են մեղք չգործել, որ ցորենի արտերն ազատ մնան որոմից» (Լալայան Ե., Երկեր, հ. 3, էջ 199):

Քննվող ոգու մասին ամենատեղյակ հատկանիշներից է վերջինիս չափազանց աշխույժ, ակտիվ, արագաշարժ ու աշխատասեր լինելը, որ բնորոշ է նաև ստորին առասպելաբանական որոշ (սատանա) կերպարներին: Շիրակում չափազանց ակտիվ ու շարժուն երեխային նույնպես խլվիկ են ասում: Խլվիկ-խիպիկի հավատալիքը չի կենցաղավարում վերոնշյալ ազգագրական շրջաններում: Ոգու մասին պատկերացումները արտացոլված են միայն բանահյուսական ու ազգագրական սկզբնաղբյուրներում, գեղարվեստական գրականության մեջ:

Ժողովրդախոսակցական լեզվում մարդուն սատանայի հետ համեմատելիս՝ հաճախ գործածվում է խլվիկ ածականը՝ ի՞նչ խլվիկ սատանան էս: Ժողովրդական ասուբաբանության մեջ հեզմանք պարունակող հետևյալ առածներում նույնպես քննվող ոգու մասին պատկերացումներն են արտահայտված՝ «Ինչ խիպիկ, ինչ խիպիկ, ինչ նախրճին, ինչ իր կնիկ», կամ «Ինչ խիկ, ինչ խլվիկ, ինչ խնդրատ՝ ինչ ուր ծաղիկ» (Ամատունի Ս.): Այս առածի տարբերակ է նաև «Հա ուրիկը, հա տուրիկը, հա նախրճին՝ յուր կնիկը» առածը: Թվարկվածների մեջ խլվիկը, խիպիկը և տուրը ժողովրդի գիտակցության մեջ առկա չար ոգիներն են և նրանց մասին խորը հնույթներից եկող պատկերացումները:

Ժողովրդական գրույցներից մեկում խլվիկին է զուգահեռվում մեկ այլ ոգու՝ արտախլեսի հավատալիքը: Ապարանցի բանասաց Թամար Հակոբյանի հաղորդմամբ՝ «որ գուքա աշուն, որ արտը պտի հնձեն, մե փուռջ ցորեն կնձա առանց քյաղել, ոչ են աս հասկ ա, ոչ են աս փուռջ ա: Իմա էլ կուգա քյաղեն, ձեռով էլ քյաղեն, գործիքով էլ քյաղեն, ինքն, մեկ ա, քյաղվի: Հինքն պտի մնա, որովհետև հինքն արտի խոքին ա: Այ էս խաչբուռն էլ (հնձվորները արտերում հունձը սկսելուց առաջ կամ վերջացնելուց հետո ցորենի հասկերից հատուկ վարպետությամբ հյուսված փնջեր՝ «խաչբուռներ» էին պատրաստում, որոնք հիշեցնում էին կնոջ արտաքինը և նվիրում իրենց արտատերերին) արտախլեսի մնան աս, կոնենք թունդրատուն, որ գարունն բացվի, էդ սերմերն անպայման պտի

շաղ տվցվի էդ արտին մեջ: Որ շաղ ա կուտան, աղոթք ա կանեն, կասեն

Խաչբուռ (ինքն խաչբուռն Արտախլեսի մնան ա կարթեն), Խոքին արտերիս, Խաչբուռ, պաշտպան հողերիս, Դու դրախտի անմահությունն էս, Որ ծիլն ծաղիկ կանես, Իսկ մեր հույսն՝ արշալույս: Մեր խրճիքն կծպտա, որովհետև ամեն աշուն մենք էդ Արտախլեսին կկախենք թունդրատեն: Ինքն՝ հինքն, պտի էթա թունդիր, որ թագն գյա, ըստեղ կախվի: Հինքն պտի էթա թունդիր, որ թունդիրն էլ օրշնջի (Գալստյան Հ., ԴԲԱՆ 2019, Բյուրական, տետր, 2, թ. 21):

Արտախլես ոգու մասին գրույցի այլ տարբերակներ մեզ ծանոթ չեն և մեկ օրինակով դժվար է հաստատել վերջինիս՝ որպես ոգի լինելու փաստը:

Շիրակում (Ախուրյանի, Աշոցքի, Ամասիայի շրջաններ), ըստ մեր բանահյուսական արդի գրառումների, արտախլեսը ծես է կապված բերքահավաքի ավարտի հետ, և կենցաղավարել է մինչև XX դարի վերջին տասնամյակները. «Առաջներում խոտքաղի ավարտից հետո գյուղացիները հերթով սոսի կկանգնեին ու կըսեին՝ ով ինչ կրնա՝ բերե իրան հետ: Եթսի օրը ուտելիքները շալակներիս կերթայինք դաշտ, մեր որոշած տեղը կմտեինք ու արտախլես կենեինք՝ կուտեինք, կխմեինք, կշնորհավորեինք մեկս մեկիս ու Աստծուն էլ շնորհակա-

լություն կհայտնեինք, օր վերջապես արծանք էդ գործերից: Արտախլես բառն էլ կնշանագե, օր արտերից եզներով բերքը խլեցինք, բերեցինք հասցրինք մեր տները»:

Բանագետ Արուսյակ Սահակյանի բանավոր հաղորդմամբ՝ «արտախլես» բառը կազմված է ոչ թե խլել, վերցնել բառից, ինչպես բացատրվում է վերոնշյալ գրույցում, այլ խլել, ավարտվել, վերջանալ բառից է: Մենք համամիտ ենք բանագետի տեսակետին և հաստատում ենք, որ արտախլեսն, ի վերջո, բերքահավաքի ավարտն ազդարարող երևույթ է: Շիրակի Կապս գյուղի բնակիչներից մեկը գնում է իր ցորենի արտը նայելու, տեսնում է՝ արտը ոսկու մնան կանգնած է և առատ բերք է խոստանում: Ուրախությունը չի կարողանում զսպել, հավաքում է իր մոտիկ բարեկամներին և արտախլես անում: Նույն օրը կարկուտը փչացնում է բերքը: Հարևան գյուղացիները հանդիմանում են՝ ասելով. «Ո՞վ է տեսել քաղից առաջ արտախլես անեն: Բերքը տա՛ր տուն, հետո ասա շնորհակալությունը»:

Վան-Վասպուրականի ազգագրական շրջանը ներկայացնող «Յանիկ» հեքիաթում նույնպես «արտը արծնելու» կապակցությամբ արտախլեսի պատրաստություն են տեսնում:

Վաստահորեն կարելի է ասել, որ արտախլեսը ծես է և լայն կենցաղավարություն է ունեցել Շիրակում, Վան-Վասպուրականում և այլուր:

ՀԱՍՄԻԿ ԳՍԼՍՅԱՆ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ

Լրատվական գործունեությունն իրականացնող Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543
տրված է 21.03.2005թ. հեռ. (094) 53 44 64
Խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝ Ռոզա Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝ «Էլտորադո Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Ռուբիկ Դարիբյան» Ա/Չ տպագրատանը
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 1 տպագրական մանուկ